ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 1-ին, կիրակի.—Դ կիրակի բառասնորդական պաւոց. Տնտեսի.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Գեղարդի վանքի վանահայր տ. Նարեկ վրդ. Շաքարյանը՝ «Տուր զհամար տնտեսութեան քո» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մարտի 8-ին, կիրակի.—Ե կիրակի բառասնորդական պաւոց. դատաւորին.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Նշան քհն. Բեյլերյանը։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Գեվորգ վրդ. Սերայդարյանը՝ «Պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս և մի ձանձրանալ» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մարտի 13-ին, ուրբաթ.—*Երեկոյան ժամը 19-ին Երևանում, հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը։*

* * *

Մարտի 14-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի շարչարանացն և մտին ի Վիրապն.

Մայր տաճարում, Իջման սեղանի առաջ, ս. պատարագ մատուցեց տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանը։

Նույն օրը, կեսօրից հետո ժամը 14-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի հերթական նիստը՝ քննության առնելու համար 1970 թ. Մայր Աթոռի շինարարական աշխատանքների ընթացքը։

* * *

Մարտի 21-ին, շաբաթ.—*Այսօր, երեկոյան ժամը 18-ին, հոգևոր ճեմարանի հանդիսասրահում դասախոսություն է կարդում հոգևոր ճեմարանի գրաբարի դասախոս Ս. Անթոսյանը՝ «Հայ մշակույթի համաշխարհային արժեքը» նյութի շուրջ։*

Դասախոսությանը ներկա են Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը։

* * *

Մարտի 22-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Այս հանդիսավոր տոնի առթիվ Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։

«Հայր մեր»-ից առաջ հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը քարոզում է «Ռաբբի՛, դու ես որդի Աստուծոյ, դու ես թագաւոր Իսրայելի» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Նույն օրը, երեկոյան ժամը 17.30-ին, Մայր տաճարում կատարվում է «Դոնբացէք»-ի հանդիսավոր արարողություն՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ։

Ա.Ա. 12509